# ԱՎԱԳ ԽՄԲԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### Պարզ ծառայություն

- Ժպտացեք յուրաքանչյուրին, ում տեսնում եք:
- Նամակ գրեք որևէ միսիոների:
- Երգ երգեք՝ որևէ մեկին ուրախացնելու համար:



### Արվեստի մարտահրավեր

Այս տարածքը լցրեք որքան հնարավոր է շատ օրինակներով:



### Տաճարային նախապատրաստության հուշում

Տաճարների մասին երգ կամ բանաստեղծություն գրեք, նաև նկարեք ձեր մոտակա տաճարի նկարը:

### Ոգեշնչող խոսքեր

***«Ամեն ժամանակ ուրախ եղեք, և ամեն ինչի համար գոհություն հայտնեք»:***

Վարդապետություն և Ուխտեր 98․1

### Խոհարարություն *Ընկերամսագրի* օգնությամբ

Ես սիրում եմ պատրաստել *Ընկեր* ամսագրի բաղադրատոմսերով: Երեխաների և երիտասարդների ծրագրի համար իմ նպատակներից մեկն է՝ սովորել ուտելիք պատրաստել: Զվարճալի է հետևել բաղադրատոմսերին և նաև շատ համեղ է: Ես սովորում եմ խոհարարական նոր մեթոդներ:

**Դեյվիդ Ա., 9 տարեկան, Յուտա (ԱՄՆ)**

